


ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Père G. Kalémkarian Mechitaristengasse
N 4 Vienne



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Պուշկարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (երկու քիչ մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԻԻ

Համակ դրամ եռայն դրկը հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.ՌԱ.Ա. (Պուշկարիա)
Редакция на вѣст.
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
YARN (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Դասնացումն տողը 20 սանթիմ. երե-
ւոյն աւելի անգամներու համար 20 0/0
գնդը կը լինի:

ԵԳԻՊՏԱՅԱՅ ՔՐՈՆԻԿ

—X—

Գահիրէ, 14 ապրիլ 1899

Ջանքեր վանի սովորոց օգ-
տին. — Ազգ. ընթ.ի վարչութեան
դերը, — Հանգանակութիւն. — Պէն-
յանս դերասանական խմբի շահա-
գործութիւնը. — «Փրիւնիկ» հանդէս
կրտսեանայ:

Վերջապէս փարաւոնները երկ-
րի—Եգիպտական — մեղադրուցիչ
միջոցաւ մէջ գտնուող թմրած
հայութիւնն էլ սկսեց քիչ քիչ
կենդանութեան, զգայնութեան
նշաններ ցոյց տալ, հետաքրքրուիլ
սկսեց սովորական—հասարակական
գործերով:

Վանի սովի աղէխարչ լուրը
կայծակի արագութեամբ Եգիպ-
տոսն էլ հասաւ և ցնցուելու, շար-
ժուելու առիթ տուեց թերեւս
զգայուն, բայց թմրած սրտերին,
այդ հոգի ու սիրտ մաշող լուրը
մղել, մտաբանել սկսեց հոգեւոր ու
մարմնով լքուածներէն զէպի նուի-
րական սրբագործութեամբ պարտա-
կանութիւնը, առ հայրենիք, առ
ծնադր, ընտանիք, առ քոյր, ըն-
կեր, եղբարք, սիրելիք:

Ամիս ու կէս առաջ տեղւոյս
վասպուրականցի հայ համայնքը
լսելով իրենց հայրենիքում սովա-
տանջ շարժարտողների սոսկալի դը-
րութիւնը միջոցներ ձեռք տուեց
նուրբապէս օժանդակութիւն մը
հասցնելու վանի սովիաթներին,
որի համար վասպուրականցի հայ
համայնքի կողմէն քանի մը ստո-
բագործեամբ հանրագիր մը տը-
րուեցաւ տեղւոյս, Գահիրէի հա-
յոց Ազգ. ընթերցարանի Պատ.՝
վարչութեանը, իբրեւ աւելի կա-
րող մարմին ու ծանօթ տեղական
հանգամանքներին որպէս զի «ի
նպատակ վանի սովիւրոց» ներկայա-
ցում մը տալու նախաձեռնութեան
պատիւը և մինչև ժամանակ
նեղութիւնը ստանձնել բարեհաճի:
Ուրախ ենք որ յիշուող վարչու-
թիւնը ամեն կերպ պատրաստա-
կանութիւն յայտնեց և սիրով ըն-
դունեց վասպուրականցիների պա-
տուարներ առաջարկութիւնը, որի
համար փոյթեաւորն կ'աշխատի ի

մասոյ տալու այդ ներկայացումը,
արդիւնքը կապասուի 80 էն 100
ոսկի: Յաջողութիւն. — Սոյն տե-
սակի հանրագում գործունէութե-
ան ինքնակամ Պատ. վարչութիւնը
թերեւս կամայ կամայ կարողա-
նայ Գահիրէի հայ հասարակու-
թեան զէպի զինքը լարուած տը-
րամագրութիւնը բարեփոխելու
զէպի լաւը. և Գահիրէի հայ հա-
սարակութեան այն լարուած տը-
րամագրութիւնը զէպի լինթ. վար-
չութիւնը արգար է և իրաւացի
հանդէպ վարչութեան անգործու-
թեան: Ընթերցարան մը ունի ի-
րեն տրամագրելի, բայց սեփական
նութիւն է դարձել վարչութեան
7-8 անդամներին, այն գրութեան
է վերածուել ընթերցարանը ինչ
գրութիւն որ կուենայ 7-8 մարդ-
կանց համար մասնաւոր գրասարան
մը, . . .

Ընթերցարանում ստացուած զա-
նազան թերթերը, հանդէսները
ստանդարտի վրայ անգործ, սպա-
սողական դիրքով մնալէն այլ եւս
ձանձրացած լուրի բողոք են բարձ-
րացնում, կարգալ ցանկացողնե-
րէն արգելում է յաճախել ըն-
թերցարանը: Նոյն բողոքով վի-
ճակին ենթարկուած են նաեւ պա-
հարանների գրքերը. . . . Յա-
ջող անգամ մենք երկար և ման-
րաման կը դառնանք այս խնդ-
րին:

Տեղւոյս առաջ տեղապահ Յա-
կոբ Աշատ եպիսկոպոսը, մինչեւ
վասպուրականցիների շարժումը
զէպի սովիաթներ, անտարբեր կը
դառնալէր, բայց երբ տեսաւ որ,
ինչ որ իր պարտականութիւնն է
ամենից առաջ, հասարակութիւնը
կընէ, այն ժամանակ միայն զգաց
և որովհետեւ ներկայացում տա-
լու պատրաստութեան հետ ձեռ-
նարկուեցաւ նաեւ հանգանակու-
թեան, այդ զէպում Գէր. Էպիս-
կոպոսն էլ ամալ թափալ աշակ-
ցիլ սկսեց:

Հանգանակութեան յանձնաժո-
ղովին նախագահելու համար ա-
ռաջարկուեցաւ հանգուցեալ Նու-
պար վաշայի որդւոյն Պողոս փա-
շային նոյնպէս և փեսային, Տիգ-
րան փաշային, բայց երկուքէն և
ոչ մէկը ընդունեցին այդ առա-

ջարկութիւնը, առարկելով թէ
«Սգաւորներ ենք»: Մի միայն
100 ոսկի Պողոս փաշան և 50 ոս-
կի էլ Տիգրան փաշան նուէրներ
ընելով վանի սովիւրոց օգտին,
այլեւս անձնապէս չը մասնակցե-
ցան գործի աշխատութեանը. մինչ-
դեռ իրենցմէ մէկն ու մէկի ուղ-
ղակի նախագահական մասնակցու-
թիւնը հանգանակութեան գոր-
ծում, զգալի կերպով առատ ար-
դիւնք կարող էր արտաբերիլ:

Ինչ արած սակայն, երբ այդ-
պէս են մեր փաշաները, սգաւոր-
ներ էին. այդ մի բանաւոր պատ-
ճառ չէր, ընդհակառակը, աւելի
յարմար բոլոր էր, երբ իրենց անձ-
նակտն մասնակցութեամբ, շատ
որբերի, այլերի, վերջապէս կա-
րօտեանների առժամանակեալ կեր-
պով արտաստեմքերը դադարեալ
պատճառ պիտի դառնային, որոնք
փշուր մը հաց աւելի պիտի ունե-
նային ուսուցի առժամեայ գոյու-
թիւնին պահպանելու համար:

Մեծ պարտականութիւն մը և
բարեգործութիւն մը կատարած կը
լինէին Պողոս և Տիգրան փաշա-
ները, ուղղակի գործին կարապե-
տելով և այդ էլ այն ժամանակ
երբ առաջինի հօրը և երկրորդի
անեղով հողագործարանը դեռ շատ
թարմ էր. . . .

Ծարունակելի Ոսկան—Նազար

ԹՂԱՎՅՈՒԹԻՒՆ

Բարիկ, 14 ապրիլ 99

Ժիւլ Ֆերիի արձանը

Յիւնասի երկրորդ հասարակապե-
տութեան պետական անձանց մէջ Ժիւլ
Ֆերիի ստալին տեղերէն մին կը բռնէ:
Մենք չենք ուզիր ներքին քաղաքա-
կանութիւնը քննադատել. բայց արտա-
քինը շատ մեծ եղած է: Այդ անձը
Յիւնասան գաղութական քաղաքակա-
նութեան շաղկին մէջ մտցուց եւ վե-
րահաստատեց այն գաղութական կոյս-
րութիւնը որը հիմնած էին Ռիշլիօ,
Գոլպէր և Ֆրիլէքս և զոր Յիւնաս
կորսնցուցած էր Լուդովիկոս Ժե. ի
յանցանքներով:

Շնորհիւ Ժիւլ Ֆերիի, այսօր Յիւնա-
սան աշխարհիս երկրորդ գաղութա-
կան պետութիւնն է. Թոնքինի գրա-
ւումը, Մատակասկարի և Գոնկոի ա-

ռաջին ձեռնարկութիւնները ինք ըս-
կաւ:

Բայց անոր արտաքին քաղաքակա-
նութեան զլխաւոր փառքն է Թիւրիզի
առումը, որ առանց մեծ դժուարու-
թեան եղաւ եւ Յիւնասի Միջերկրա-
կանի եզերքն ունեցած գաղութները
փառաւորապէս կատարելագործեց: Իւր
քաղաքական հակառակորդները, զինքը
նախատելու համար իրեն նախ Թիւ-
րիզի եւ Թոնքինի սխալողները
տալին, սակայն, այժմ արդարութեան
կը յաղթանակէ, եւ այդ կարծեցեալ
նախատինքները անոր համար գովեստ-
ներ կը լինին: Թիւրիզի մէջ, այդ
պետական մարդուն արժանի արձա-
ն կը կանգնեն, այդ ազգային երախ-
տագիտութեան մի մեծ նշանն է: Իւր
բրածն ընելու համար, նա ամենամեծ
եռանդ ունենալու էր: Կրօնն թէ եր-
բմեմ նա գէշ բնաւորութիւն ցոյց տը-
ւաւ, բայց անհերքելի է թէ Ժիւլ Ֆե-
րի կամք ունեցաւ, եւ մեր ժամանակ-
ները մարդու մը ասկէ աւելի լաւ գո-
վեստ կարելի չէ ընել:

Ժամտախոր Մասկարի մէջ

Օսմանեան առողջապահական նուի-
րակին նախկին, ժամտախոր Մասկա-
թի մէջ տարածուած է, շատ խիստ
հակոյտութիւններ տեղի պիտի ունե-
նան ի Փորթ-Սալիմ եւ ի Սուէզ: Տագ-
նապը այնքան մեծ չէ սակայն, վասն
զի ինչպէս Վիլհելմայի մէջ պատահե-
ցաւ, կըսուի թէ, վարակեալներն
կ'ըզիւցնելով, կարելի պիտի լինի հի-
ւանդութեան առջեւն առնուլ:

Մատակասկարի խնդիրն

Հակառակ անգլիական մամուլին ը-
սածներուն, մենք կրնանք պնդել թէ
Յիւնասի եւ Անգլիոյ մէջ բնաւ բա-
նակցութիւն մը չը կայ Մատակաս-
կարի մասին: Յիւնասի համար Մա-
տակասկարի խնդիրն լուծուած վերջա-
ցած է արդէն:

Լա Հայի Դիւպաւանտորովն

Ռուսիոյ խնդրանք Բոլկարիան եւս
մասնակցելու է Վեհաժողովին: Թրանս-
վալլ միւլենոյն գոհացումը չունեցաւ,
վասնզի Անգլիա հակառակեցաւ: Ռու-
սիա շատ ջանաց Ս. Պապն ալ ժողովին
մէջ մտցնել, սակայն զօրավարն Գանէ-
վարօ բացարձակապէս մերժեց զայն,
մերժում մը զոր ամենայայտնի մար-
դիկն չեն հաստատել, ինչպէս կը տես-
նուի Պ. Վիլքսօնի Վէնուիայի բռն-
նամ ընթացքէն որ մերժեց Իտալիոյ
ներկայացուցիչ լինել ի Լա Հայ:

Պրաքսիի կոնֆերանսին

Անգղիայ հրաւերներուն տեղի տալով, Պրաքսի մօտ ժամանակներս, ժողով մը ընել պիտի տայ ի Պրաքսի, Արիւնիկէի մէջ ալքոօլ մտցնելու խնդրոյն համար: Պրաքսիի Դաշանց հնազանդելով, արդէն իւր ներկայացուցիչներն նշանակեցին: Այդ խնդրոյն ամենալաւ լուծումը տալու է:

Մեզ գիտել կուտանք թէ անգղիական կառավարութիւնը որ այնքան մարդասէր կը ցուցնէ, ինքզինքն երբ խնդիրն Արիւնիկէի սեւերուն վրայ է եւ կամ այդ ալքոօլի վրայ — գոր ինքը չէ ներմուծողը — չը վարանեցաւ Ձինաստանի դէմ պատերազմ բանալու: անոր իրաֆիոնը գործածել տալու համար:

Սկզբունքով, Արիւնիկէ ալքոօլ մտցնելու խնդրոյ մասին որոշողութեան մը պիտի յանգին, սակայն որոշուած օրէնքներն գործադրելու համար բաւական զօրութեամբ պիտի հանդիպին, վասնզի անկարելի պիտի լինի դէթ սկիզբները եւ դեռ երկար ժամանակ, կանոնաւոր մաքս մը հաստատելը:

Առանց թելի հեռագիրը

Պ. Մարգոնի — որ առանց թելի հեռագիրը հնարած է — նոր եւ սքանչելի փորձեր ըրաւ երէկ, Ֆրանսական ծովագետն անգլիական ծովագետքը հեռագիրներ զրկեց եւ ընդունեցաւ: Այս գիտնականը իր գործիքներուն մէջ այնպիսի կատարելութիւններ մտցուցեր է որ անկարելի է որ անոնց չնորհիւ զրկած լուրերն ընդունին: Պ. Մարգոնի գիտն օր ըստ օրէ կարեւորութիւն կը ստանայ:

Գետնի տակի Պարիզը

Պարիզի մետրոպոլիտական երկաթուղւոյ գիծը, որ ամբողջ քաղաքին

երկայնութեամբ անցնելու — Գլխաւոր անտառէն մինչեւ Բուա-տը-Բոլոյն անտառը — գրեթէ վերջացած է եւ քանի մը ամիսէ երթեւեկութիւնները պիտի սկսին: Ծուցահանդէսի ժամանակ, այցելուները 10 ասնթիմի փոքրիկ գումարով, պիտի կարենան Պարիզի մէկ ծայրէն միւսը երթալ, ամենաարագ միջոցով:

Ինչ որ հրաշալի է, այս ահագին աշխատանքը կատարուած է առանց քաղաքին երթեւեկութիւնը խանգարելու: Այս շողկառու մէկ ծայրէն միւսը դետին տակն է: Երթեւեկութիւնները գիւրացնելու համար ութը մեծ կայարաններ հաստատած է ընկերութիւնը որոնք նոյնպէս գետնի տակն են: Երկաթուղիին ճամբան եօթը մեզր լայնութիւն ունի, իսկ կաշաւանները 14 մեզր պիտի ունենան: Թէ ուղին եւ թէ կայարանները եւ քաղաքական լուսով պիտի լուսաւորուին եւ ցորեկուան պէս պիտի լոյս լինին: Վեց ամիսէն աւելի հարկաւոր չեղաւ այս գործը գլուխ բերելու: Գործաւորներն աշխատելու եւ վտանգէն զերծ մնալու համար պոլիպատէ վահաններով պաշտպանուած են: Այս աշխատանքը երկրաշփոխներու ճարտարութեան ամենագեղեցիկ ապացոյցն է:

Ս. Բեդերսպուրիի քաղաքապետն ի Պարիզ

Ս. Բեդերսպուրիի քաղաքապետ՝ Պ. Լէլիանօֆի Պարիզ գալը յանուն ռուս մայրաքաղաքին Ֆէլիքս-Ֆօրի գերեզմանին վրայ պսակ մը դնելու՝ միայն քաղաքապետական ցոյց մը չէ այլ նաեւ համակրական գործ մը է: Յիշատի յայտնի է թէ Ս. Բեդերսպուրիի քաղաքապետն, այս ճանապարհորդութիւնը առանց իր վեհապետին հրամանին չըրաւ: Ուրեմն մենք Յիշատի-Ռուսա-

կան նոր մերձեցման մը փաստին առաջ կը գտնուինք: Այս յարգանքը որ այսպիսով հասարակագիտութեան նախկին եւ ողբացեալ նախագահին կը մատուցուի, առանց քաղաքական կուսակցական խարուսխան բոլոր Յիշատիացուց հաճոյք կը պատճառէ: Պարիզի քաղաքապետական վարչութիւնը շատ լաւ ընդունելութիւն մը ըրաւ Պ. Լէլիանօֆին:

Մարշալն հրամանատարը

Մարշալն հրամանատարը ողջ առողջ հասեր է մինչեւ Հապէշիստանի Մէնէլիքին մայրաքաղաքը: Այդ զինուորականը որ այսօր Ֆրանսայի մէջ ամենամեծ ժողովրդականութիւն վայելող անձանց մին է, ժամանակ մը Մէնէլիքի թով իր յոգնութիւնն առնելէն յետոյ, քիչ ժամանակէն պիտի վերադառնայ Ֆրանսա, ուր իրեն համար համակրելի ընդունելութիւն մը կը պատրաստուի:

A. Saissy եւ Մելիք Ս. Դալիք-Երիկ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Սուլավայի Հայ. Եկեղեցւոյ Պատ. Հոգաբարձութիւնը պաշտօնական նամակաւ մը կը խնդրէ մեղմէ հրատարակել հետեւեալ յայտարարութիւնը.

Պատահաբար լսելով որ մեզ անձանթ մի անձ, Պուլկարիոյ և Ռուսմանիոյ մէջ հանգանակութիւն կը կատարէ յանուն Պուլկարիոյ, ի հայոց, Սուլավայի և Պուլկարիոյ Հայ Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնս կը փութայ, ներ-

կայիւս յայտարարել թէ՛ մեր կողմանէ ոչ ոքին արտօնութիւն տրուած չէ մեր իրաւասութեան տակ գտնուած որ եւ իցէ եկեղեցւոյ մը շինութեան կամ նորոգութեան և կամ ուրիշ որ եւ իցէ աղքատին հաստատութեան մը անունով հանգանակութիւն կատարել: Հետեւաբար այդ անձը ով որ է խորհրդայ մըն է և իր ներկայացուցած պաշտօնագիրը կողմէ՛ եթէ ունի:

Մնաք յարգանք

Ի դիմաց Պուլկարիոյ Հայ Եկեղեցւոյ Հոգաբարձութեան.

ՎԱՐԴԵՐԷՍ Կ. ԲՐՈՒՆԴՈՍ

Պաշտօնական կնիք

ԿՐԵՏԷ

(Շար. Լախորի քիշէն եւ վերջ)

Ռեթիմօ, Հաննայի և Գանտի. այի մէջ ծովագետք քաղաք մըն է և կը կառավարուի Ռուսաց ձեռքով. հոս և շրջակայքը միայն Ռուսական զօրքեր կը գտնուին, կըսուի որ թրքաց մեծ մասը գաղթած են, իրենց տունները 10-20 տակի յունաց ծախելով:

Գանտիա, նշանաւոր ծովագետ. եայ քաղաքն, նմանապէս ճիշդ նովայոց ձեռք շինուած ամուր պարիսպներով շրջապատուած. ունի մի փոքր նաւահանգիստ, ուր շոգենաւները չեն կարող մըտնել, միայն առաքաստանաւերը կը. նան մտնել, Նաւահանգստի մտից

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ(4)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

ՄՍՍՆ ԱՌԱՋԻՆ

Գ.

Երեկոնները շատ անգամ Յովհաննէս աղա դասերուն ներկայ կը գտնուէր. ատիկայ պատճառ մըն էր որ Հրանդաւաւելի հոգատար ըլլար իր ընթերցումներուն, գորս շատ ուշադրութեամբ կը պատրաստէր:

Ի նկատի ունենալով այս պարագաները, ժամանակը կը սկսենք ըսելու որ, մինչդեռ ուրիշ զրամատէրներու մօտ աշխատող շատ մը երիտասարդներ գրասեի կամ ստրուկի նշանակութիւն ունէին իրենց տիրոջ տնայնէ՛ վահրամ, հետզհետէ Յովհաննէս աղայի աչքին առջեւ իր բարոյական արժանիքը կը բարձրացնէր. պատահեցաւ օր մը որ էրիկ կնկան մէջ անպայման համակրական լիզում մը գործածուեցաւ. անոր համար, այդ տեղ եկաւ Հրանդաւաւաւաւաւ ալ խառնուեցաւ. մօտիկ ապագայի մէջ իրագործելի ծրագիրն ալ պատրաստուեցաւ նոյն իսկ. խօսուեցաւ որ այդ երկու գոհարները ամուսնական կապով մը իրարու միացնելը իրենց տունին մէջ փառքի պսակ մը բոլորել պիտի նշանակէր: Այս նկատուածները պատճառ էին որ Յովհաննէս աղայի վիճակակիցներու ընկերային հաւաքումներուն մէջ վահրամ ալ իր տեղը ունենար թէպէտ այդ ընկերութեան ներկայացուցիչներու շատերէն շատ բանաւոր հաշիւներով մէկ մասին չախորժէր. այս վերջինները կարգ մը ու-

րիշներու հետ նախապէս չը սիրեցին վահրամի ներկայութիւնը. մինչեւ իսկ այնչափ առաջ գացին որ, ըսին թէ՛ «չիացած լիբը մը պիտի ըլլայ այդ տղան, որ այն տարիքէն գործ կուենեար իրենց հետ», սակայն վահրամի պահած լուսթիւնը, վերջ ի վերջոյ ցոյց տուած ծանրախօսութիւնը եւ խոհեմ պատասխանները իրենց կրեւտակներու ոսկի ունեցող բայց խորհելու կարողութիւն չունեցող մեծ մասին սխալ կարծիքները, այնպէս որ Յովհաննէս աղայի չափով վահրամը սիրել, անոր ներկայութեանն ախորժիլը պարտք մը եղաւ:

Գ.

Մնունդի շնորհաւորական այցելութիւններուն ատեն ջովերուն հետ չէր վահրամը, սակայն ոչ-ջովերուն հետ ալ չէր: Գուրումմեհանց փողոցի իրենց տան մէկ անկիւնը քաշուած տխուր, տխուր կը մտածէր, ձեռքը նամակ մը կար, ըստ երեւոյթին իր տիրութեան գլխաւոր շարժառիթներէն մէկն էր. այդ աշուշտ պայծառութեամբ փայլող գէմքին եւ կենդանութեամբ լեցուն աչքերուն մէջ թախմալից արգայայտութիւն մը կը կորագրուէր:

«Ա՛խ, որքան անտանելի է այս, ըստ մէկէնիմէկ, ո՛վ կրնայ ըլլալ այս անձանթի նամակաղբիւր. բարեկամ մը չէ թէ երգուած ոտիւ մը. ինչ կուզեն Յովհաննէս աղայէն, որոյ կոնակէն փնտա տեսնող մը չը կայ եւ որուն ներկայութիւնը ընդհակառակը միւրթաւութիւն մը է Ակնի համար:»

Դիւրին է մոկաբերել սա խօսքերէն որ առաւօտուն կանուխ ընդունած

իր այդ նամակին մէջ սպասուելիք մը մը կար իր տիրոջ հասցէին. նամակին պարունակութիւնն հետեւեալն էր.

«Պարոն, «Ձեր եւ Ձեր ծառայած անձին Յովհաննէս աղայի բարեկամ եւ օգուտը «մտածող մէկն է ներկայ երկրորդ գըրդը. պարտք կը սեպմի ձեզ զեկու-«ցանել որ զգոյշ կենաք ամեն կերպով, որովհետեւ քանի մը չարամիտ-«ներ կը խորհին ամեն տեսակ ստոր-«միջոցներով վտանգել Յովհաննէս ա-«ղայի գործը եւ կենսը. եթէ յար-«մար տեսնաք երկրորդը պարունա-«կութիւնը կրնաք հաղորդել առ որ «անկ է»:

Ներքին անըմբռնելի բնազդի մը գրգռումով կրկին կը տխրէր վահրամ. ինչ որ ալ ըլլար այդ նամակը անհամ կատակի մը արդիւնքը չէր. թիւրքախայի մէջ ամենէն կատաղի կատակասէրն անգամ այդ ճիւղէն կը զգուշանայ. այս տեսակ գրութիւններ գրեթէ միշտ լուրջ նշանակութիւն ունին. այդ գրութեանն սուկ ծածկուած գաղտնիք մը կար. զօրազորութիւնը հոն էր որ գրողը գաղտնիքին վարագործը չըլլալէ զատ կրնային ալ չէր բացած: Վերջին անգամ ուշադրութիւն դար-ցուց գրեւոր մը. ձախէն ալ գըրուած էին, չափէն աւելի խոտորակի, զողողուն եւ փափուկ գործ էր անշուշտ, որովհետեւ վահրամ նեղութիւն չը կրեց հետեւեցնելու որ կնոջ մը գիրերուն կրնային նմանիլ, զի ինչ որ ալ ըլլայ փափուկ տեղ գրելու մէջ ալ տեսակ մը թօն պահած է. գուցէ գրելու

իդական թօն մը, եթէ երբէք կարելի է այսպէս բացատրել: Աշխարհային շատ մը քարձուածներու անտեղեակ միտքը որքան ալ տանջեց լոյս մը չի կրցաւ սփռել այդ նամակը չըլլալու տող գաղտնիքին վրայ: Ճաշի ատեն տեղան չի նստաւ. մայրը քանի անգամ ի դուր մօտեցաւ իրեն եւ տեսնելով վահրամի աչքերուն վրայ ծանրացող յայտնի յոգնութեան նշանները, անհամարձակ եղանակով դէմքին դալու-թեան պատճառը հարցուց պատասխան չստացաւ: Այս տեսակ հանգամանքի մէջ, խօսելու այս անհամարձակ եղա-նակը մայրերուն համար, պէտք է գիտնալ որ շատ յատկանշական է: վահրամի պէս զաւակ մը ունեցող ճշմարիտ մայրերը իրենց հոգեհատորին գլխին գալիք փորձանքները միայնակ առնելու յօժարութիւնը ունենալով հանդերձ զարմանալի համակերպու-թեամբ ամեն անգամ կը լռեն պատ-ռով անհանգստութիւն մը զգալով իրենց կործէին տակ, պարզութեամբ մտածելով որ թիւրեւ չը պիտի կըր-նան բառնալ իրենց զաւակի տիրե-ցնող խոչնդոտը: վահրամի գանկին մէջ փոթորիկը փրթեր էր. զիրար կտրող հովեր ամեն կերպ կը փշէին հիմա. ո՛ր եւ է եղբայրացութեան չը կրցաւ յանգիլ, նոյն իսկ սա կէտին վրայ թէ՛ պէ՛տք էր ատոր պարունակ-կութիւնը յայտնել Յովհաննէս աղա-ին:

Շ. Կամուսարական

(Շարունակելի)

ալ կողմի պարսպին բարձանցը վրայ կը գտնուի ծովային փարոսը՝ չաւահանգստին վրայ բացող, բայց վերջին դէպքէն անմիջապէս վերջը գանձուած լիման քափու- սիէն երբ ներս մտնուի, առաջին անգամ աչքի գէտ կենէ այրած աւերակներու կռտ մը, որոնք ժամանակաւ Գանտիայի շուկան կը կազմէին։ Վերջին դէպքին ժա- մանակ երբ թուրքերը ամբողջ գիւղերէ և հեռաւոր վայրերէ Գանտիա կը ժողուին, ամբողջ պարսպներու գոնիքը կը գոցեն և կըսկսին աւարի տալ քաղաքը և յոյները սպաննել։ ասով գոհ չլլալով, նաւահանգստին բար- ձանց վրայ և ճիշդ մաքսատան ե- տեւ գտնուող Արգիլիոյ հիւպատո- սարանը կը մտնեն, հիւպատոսը, ինչպէս նաեւ մի քանի Արգիլի- ան զօրք կըսպաննեն և շուկան կըսկի կուտան։ Ահա այս պա- հուն Եւրոպական նաւատորմիչը հոս կը հասնի առաջնորդուած Արգիլիական նաւատորմիչէն և կը ստիպեն կառավարիչը շարքը և աւարը դադարեցնել, հակառակ պարագային յիշեցնելով որ պիտի ստիպուին քաղաքը ուժակոծել և հիմնադատակ ընել։ Կառավարիչը մեծ դժուարութեամբ կարող կըլ- լայ թուրքերու ֆանտիլիքութիւնը հանդարտեցնել, քաղաքին երեւե- լինելու և իւլէմաններու ընկե- րակցութեամբ։ Աւարի դադարու- մէն անմիջապէս ետքը և նոյն օրը Արգիլիական զօրքեր կը գրաւեն Գանտիա առանձին և ցարդ հոն կը տիրեն։ Կառավարական պաշ- տօնատանը Արգիլիացուց ձեռքն է և Արգիլիական դրոշակը կը ծա- ծանի պաշտօնատան վրայ։ Ամեն կողմ Արգիլիական պահակ կայ- իսկ զօրքերու ջոկատ մը օրական մի քանի անգամներ զօրանոցէն դէպի նաւահանգիս կիջնեն, ու- զելով յիշեցնել ժողովրդեան իրենց ներկայութիւնը։ Արգիլիացուց Գան- տիա տիրելէն անմիջապէս վերջ, թուրք ապստամբները կը բռնուին կը կախուին, իսկ այն առններէ որ հրացան պարպուած են հիմնա- յատակ կը քանդուին։

Գանտիա, այրած շուկայէն զատ, ունի շուկա մըն ալ «Շատ- բուան մէյտանի» կոչուած տեղը, ուր կը գտնուի նաեւ կառավա- րական պաշտօնատունը։ Քաղաքը շինուած է զառիվայրի մը վրայ։ Արգիլիացիք, Հանեա քափուսիէն մինչև «Թրիս քամարիս» (երեք կամար) դուռը՝ շինած են առժա- մանակեայ ատաղձէ զօրանոց և ուր կրնան պատսպարուիլ իբր 17000 զօրք։ Բնա այս ատաղձէ չենքերուն ճիշդ մէջ տեղը և մէկ ուղղութեան վրայ շարուած են հինգ հատ հսկայ թնդանթիներ, բերանին քաղաքին վրայ ուղղուած։ Արգիլիական զօրաց Գանտիայի ընդհանուր հրականատարն է Սըր Հէրմ. Սայտ գնդապետը, Հոս և շրջակայքը գտնուող թուրքեր, իբաց

առեալ պաշտօնի մէջ գտնուող անձինք, ընդհանրապէս թուր- քերէն չը գիտեն։ Մարդ կը վար- մանայ երբ թուրքերէն հարցում մը կընէ գլուխը ճիւղակ կամ կարմիր թաշկինակ դրած մար- դու մը որ թուրք է և որ կը պա- տասխանէ յուններէն լեզուաւ թէ թուրքերէն չը գիտէ։ Երբ հարցուի թէ ինք թուրք չէ՞, կը պատաս- խանէ թէ «թէեւ թուրք է էլ համ- տիլլահ» բայց թուրքերէն չը գի- տէ։ Հոս կայ պատուական Ար- խանէսի գինի։ Առեւտուրը շատ գիշ վիճակի մէջ է։ Բնակիչներուն չքաւորութեանը պատճառաւ։ Ար- քատութիւնը այն աստիճանին հա- սած է որ 70—80 քիլոնոց բեռ մը կրնայ մարդ փոխադրել տալ քաղաքը ժամու հեռաւորութիւն ունեցող տեղ մը քսան փարայի։ ասկէ կը հասկցուի թէ ո՞ր աս- տիճանի կրնան ապրուստ գտնել օտար գաղթականներ, նամանա- ւանդ այն գաղաւարքը որ ար- հեստ չունի, գրամ չունի։

Ես ինքս անձամբ կրեմէ այ- ցելով և աչօքս տեսած ըլլալով կըզոյն մէկ մասը և կրած ըլլալով բաւական վնաս, կուգամ ներկա- յիւս յայտնել ամեն անոնց որք կը փափաքին գաղթել յիշեալ կղզին թէ բացարձակապէս ետ կի- նան իրենց նպատակէն, գիտնալով որ իրենց այժմ գտնուած տեղեր- նին պիտի փնտռեն թախանձագին երբ հոն հասնին։ Կղզոյն մէջ գործ չի կայ ոչ թէ աղքատ կամ ար- հեստաւոր դասուն, այլ ևս հա- րուստին։ Կղզոյն այժմեայ անու- ռոշ վիճակը անոր յառաջանալուն մէկ արգելքն է։ Ամեն անոնք որ հոն երթալու միտք ունին, թող ուշի ուշով կարդան սոյն տողերը, հա- մուշուած ըլլալով որ երբ հոն եր- թան և դրամին սպառի, չը կան հոն բարեբար ձեռքեր իրենց օգ- նելու, զիրենք կըստիկրու, իրենց բնակարան տալու, վերջապէս ի- ռենց ճանքուն ծախքն հոգալու, որպէս զի իրենց նախկին վայրը վերադառնան։

Ե.

ՎԱՌՆԱՅԻ ՄԻԹԻՆԿԸ

Երէկ առաւօտ ժամը 10ին քա- ղաքիս Երեզնցուլ բակին մէջ կաղ- մուցաւ Հայկական Միթինի մը, որուն մասնակցեցան շուրջ 3,000 ազգայիններ։

Առեւտրանցին Տիարք Ամիր- խանեանց, Երուանդ Թուղաճ- եան Գ. Գուրպէթեան և վ. Շահրի- ման։

Առեւտրանցիներու կողմէ առաջար- կուցաւ Լա Հայի դեսպանաժողո- վին ներկայացնել հայկական խըն- դերը։ Ներկայք միաձայնութեամբ ընդունեցին և որոշուեցաւ Տիար Արմաս Չերազը իբր պատգամա- ւոր զրկել ի Լա Հայ։ Ներկայից

մէկ գլխաւոր մասը փափագ յայտ- նեց ինչպէս Գուրտոն Լուսինեանը ևս կցել Տ. Չերազի։

Որոշուեցաւ հետեւեալ իմաս- տով հեռագրել դեսպանաժողովի նախագահին և նամակներով դի- մում ընել ժողովին մասնակցող բոլոր պետութեանց նախարարա- պետներուն։

«Նկատելով որ վերջի 20—21 տարիներու մէջ, հակառակ Պեր- լինի դռնադրութեան 64րդ. յօդ- ուածին որ մեռեալ տառ մնացած է, թուրքիոյ Հայերուն վիճակը փոխառակ բարւոքելու, չէ դադ- րած։ Եւ ի վատթարանալու և յանգած է մեծամեծ կորուստներու որոնց վերջը չերեւիր։

«Նկատելով որ սովոր — ընդհա- նուր անապահովութեան բնական հետեւանքը — կը շարունակէ Հա- յաստանի մէջ որ արդէն վայր է գարձած շատ մը գժբախտութիւն- ներու։

«Նկատելով որ այս անտանելի կացութիւնը արթնցուցած է Հա- յերուն մէջ ըմբոստանալու ոգին, որուն հետեւանքը միշտ եղած է ազ- գերու մէջ պատերազմ։

«Նկատելով վերջապէս որ Հա- յաստանի արդի վիճակը — ընդհա- նուր խաղաղութեան սպառնացող այս վտանգը — արամագժօրէն հա- կառակ է այն մարդասիրական ոգ- ւոյն զոր ունի Չէնքիկցութեան վիճաժողովի։

«Ուստի վառնայի հայերս, մի- թինկ գուժարելով կը կարծենք ներկայացնել ամբողջ Հայութեան իղձերը, հրաւերելով Դեսպանաժո- ղովին լուրջ ուշադրութիւնը թուր- քիոյ Հայոց կացութեան վրայ և խնդրելով անկէջ մօցնել մեր երկ- րին մէջ հարկ եղած միջոցները եւրոպական երաշխաւորութեամբ և անյապաղ գործադրել զանոնք ա- պահովելու համար կեանքի պատուոյ և ինչքի գոյութիւնը հանդարտ և աշխատասէր ժողովրդեան մը։»

Միթինից ցրուեցաւ ժամը 11 1/2ին։

ԼՐԱՔԱՂ

—(X)—

Հանրածանօթ Տըր. Յ. Թիւր- եաքեան, որ քանի մը տարիէ ի վեր Թէհրան կը գտնուի և վեհ. Շահին մասնաւոր համակրանացը արժանացած է ու անոր անձնա- կան բժիշկն է, Բարիզի առողջա- պահութեան Ֆրանսական Ընկե- րութենէն օտարագրի պատուա- կալ անդամ ընտրուել է, իր հա- ղորդած Խժկական և առողջաբա- նական տեսութեանց ու տեղեկու- թեանց ի պատիւ։

—Սերաստիոյ առաջնորդ Պետ- րոս Եպիսկ. վիճակին և Մանճը- լըք գիւղի կարօտութիւնն յայտ- նելով Պատրիարքարանէն նպաստ խնդրած է։

—Ալէքսանդրիոյ Թաղ. Խոր-

հրգոյ ընտրութիւնը ամսոյս 4ին կատարուած է. հին թաղականն- րէն ոմանք չին ուղած գործէն բաշտել, հետեւաբար ընտրու- թեան բուն պայքար մը մղուած է անոնց դէմ։ 180 ընտրութեան 165ը մասնակցած են կընտրուին՝ Պողոս Նուպար բաշտ 160 քուէ- ու, Տիար Արմենակ Կամարական 121 և Միքայէլ պէյ Բէրզեան 82 քուէով։ Համեմատականի կը մնան յաղթուած կուսակցութեան մարդիկը, և հետեւեալ օրը խըմ- բովին կը հրաժարին ընտրելիու- թենէ։ Որոշուել է մեծամասնու- թեամբ ընտրուածներէ զատ պա- կաս մնացած անդամաց ընտրու- թիւնը Պողոս բաշտի տնօրինու- թեան յանձնել։

—Պատրիարքը Պողոս փաշա- յին առաջարկած է Սոյ վանքին մէջ Շահնաւարեան Ժառանգաւո- րաց վարժարանի վերահաստատումը բաշան դեռ չէ պատասխանած։

—Պոլսոյ առաջնակարգ ազգա- յիններէ շատերը Չառկի տօնի առթիւ տեղի ունենալիք այցելու- թեանց պարտականութենէ զերծ մնալու համար ինպաստ Ազգ. Հի- ւանդանոցին մէջ մէկ մասնաւոր գումար նուիրած են։

—Արմաշու Դպրեմանուց նախ- կին սաները, որոնք այժմ պաշ- տօններով այլ և այլ տեղեր կը գտնուին, միանալով մատանի մը նուիրած են իրենց ուսուցիչ Տ. Եղիշէ Եպիս. Դուրեանի՝ իր ե- պիսկոպոսանալուն առթիւ։

—Պատրիարքը հեռագրով իմա- ցուցեր է վանայ Ազգ. Առաջնոր- դարանին թէ տեղւոյն լատին Որ- բանոցէն դարձած 19 տղաքը պա- տսպարել Առաջնորդարանին պար- տականութիւնն է, և թէ պէտք է առձեռն միջոցներով հոգացուին վարագայ որբանոցին մէջ։

—Բերայի մէջ մի քանի տի- կիներ կը ջանան զանազան բա- ժիններ ստորագրելով ու ստորագ- րել տալով, աղջկանց միջնակարգ վարժարան մը հիմնել նոյն թաղի մէջ։

—Տիար Մինաս Բէրբերեան Նոր-Նախիջեւանի մէջ կեանք ա- նուն ազգային-գրական Հանդէսի մը հրատարակութիւն ձեռնարկած էր, բայց ռուս թերթեր կը գրեն թէ վերջին վայրկեանին հրատա- րակութիւնն արգիլուել է։

—Սովեալ ազգայնոց ի նպաստ անցիալ շաբթու Պատրիարքարան զրկուած դրամներ։

494 զրջ. Էօտէմիշի ազգայիննե- րէն, 100 անդլ. սկի Պողոս բաշա Նուպարէ, 3100 ֆր. Բարիզաբնակ ազգայիններէ, որք կը շարունա- կեն հանգանակութիւնը։

—Պօթուշանի նախորդ Թաղ. Խորհուրդը՝ տեղւոյն ազգային հասոյթները շորթած լինելու ամ- բաստանութեամբ Ռուսմանիոյ ներ- քին գործոց նախարարութեան քննութեանը կենթարկուի. նա- խարարութենէն կարգուած մաս-

նախուսմբ հաշիւները քննելէ վերջ
իւր մանրամասն տեղեկագիրն տետ-

րակի մը ձեւով հրատարակութեան
տուած է :

Այդ տեղեկագիրն մէկ օրինակը
մեզ շնորհած է , որուն համառո-

տութիւնը հետեւեալն է .
Թագ. Խորհուրդը կը բաղկանայ

եղեր Զօմազեան բարեպտուղ գեր-
դաստանի մի քանի անդամներէն ,

որոնք կը միաբանին , և եկեղեց-
ւոյն ու բարեգործական ընկերու-

թեան գրամները , աւելի քան
150000 ֆրանկ , կը յատկացնեն

ազարակի մը գնման , որ այդ
գումարին բնաւ համարժէք չէ :

Կը յուսացուի թէ կառավարու-
թիւնը այդ տեղեկագիրն վրայ

աղգին դրամը աղգին յատկացնե-
լու համար իմաստուն տնօրինու-

թիւն մը կ'ընէ :
Հստ մեզ շատ փափաքելի է որ

Ռուսմանիոյ ուրիշ մի քանի քա-
ղաքաց կետիկոյի Հոգաբարձունե-

րուն հաշիւներն ալ պատշաճօրէն
քննուին ու հասոյթները բուն նը-

պատակին գործածուին : Մեր այս
փափաքը կարճ ժամանակի մէջ ի-

րականանալ կը յուսայինք եթէ
Գեորգ Եպիսկոպոսի ռուսմանական

հողէն արտաքսումը տեղի չունե-
նար : Այս արտաքսման պատճառը

եթէ պարզուի ամբաստանուած
Տէր Աթանասէ աւելի մեղապարտ-

ներ մէջ տեղ պիտի ելնեն , որոնք
ազրուկի նման տասնեակ տարի-

ներէ ի վեր եկեղեցիներու կողմն
փակած կը ծծեն ու կը ծծեն :

պունկարն հասըլաթըն պուն-
տան սօնրա պանդա թահսիլ իտէ-

ճէք տիր , պու պապտէ Սուլթա-
նըն պիր իրատէսի սուտուր իթտի-

վէ պու իրատէ մուճիպինճէ Գօն-
եա , Սիվաս , Հալէպ , Ատանա ,

Գաստէմունի , Էնգարէ վէ Պուրսա
վիլայէթներն հասըլաթըն Պան-

գա ալաճագ . վէ հիւքիւմէթ մէզ-
քիւր վիլայէթներ պուշգա պօրճ-

լար իշիւն իւթէքէ վէ բէհինէ
գօյաճայաճագ տըր . ֆագաթ պուն-

տան էվվէ օլան իւթէքէլէր լալմ
օլընճայաճագ :

Ետըն , ապրիլ 25 , Պուլկարիա-
նըն միլլի մէճլիսի իշիւն հէր պիր

թարաֆտա մէպուսլար ինթիխապ
օլաճագ տըր :

Վարնա գազաթընտան 3 մէպուս
թային օլընճագ : Հէր պիր ֆըր-

գա քէնտի գանտիտալարընը պէր
վէճհի աթի կէօսթէրմիշ տիր :

ՆԱՍԻՍՆԱԼ ԲԱՐԹԻ .— Տօք. ԸՍ-
թօյիթօֆ (սապըգ մինիսթր) Տօք.

Քսանթօֆ , Ապտուլլահ Տէրվիշօֆ
ԼիդէՌԱԼ ԲԱՐԹԻ .— Տօք. Բա-

տսլափօֆ (տախիլիյէ նազըրը) Գօս-
թա Բանգօֆ , Ահմէտ խըտըրճա-

ԼԸ :
ՏԻՄՕԳՐԱՏ ԲԱՐԹԻ .— Գ. Մի-

րիսքի , Ն. Բէնէֆ , Տ. Յիւթօֆ :
ՍՍՍԻԱԼ ՏԻՄՕԳՐԱՏ .— Եանդօ

Սադըգօֆ , Գօնթան Պօզլէլիէֆ ,
Նիքօլա Կապրօսքի :

Պալատէքի բարթիլէրտէն մաա-
տա Նիքօլա Տրակուլէֆ (՝) վէ Ա.

Տիաքօփիշ ինթիխապ օլընճագ ի-
շիւն գանտիտա կէօսթէրմիշէր

տիր :
Պուլկար թապասուր օլուպ տէ
վարնատա միւթէմէքին օլան մի-

րիտէլէրն հարիգաւտէ օլան պի-
նալարըն մըգտարը 400 կէօսթէր-

մէլէրի եանըլ տըր :
—Շէհրիմիզ Ս. Սարգիս քիլի-

սէսինտէ մախսուս ախիւրէն քահա-
նայ թագաթիս օլընճն Տ. Սարգիս

պու կիւնքի վաքօր իլէ Սթանպու-
տան Վարնայա միւլասէլէթ իթ-

միշ տիր :
—Թանըն Սօֆիատան ալտըրը

հափատիսէ պինտէն Պուլկարիա
հիւքիւմէթի Մուկեթնիալըլարըն

Սօֆիատա մէճլիսի ումուի վէ մի-
թինկ թէճէմիւ իթմէսինէ միւսու-

տէ վէրմիշ իսէտէ՝ Թիւքիայա
գարըն նիւմայիւշէրի մէնն իտէ-

ցէք տիր :
Սթիթէնէվ վիթէ

Սթանպուլտան ալընճն ապրիլ
21 թարիխի թէլէկրաֆլար էրմէնի

կաթուրիկ Պատրիարքը բուլպէթ-
լու Ազարեան Գերապայճառըն

ճիւլէր իլլէթինտէն (բնէօմօնի) վէ-
ֆաթ իթմիշ օլտըրընը պիւտիւրտի-

լէր :
—Աման Բօմէնին պէյաննիւն

կէօրէ , Ժէնէվտէքի էրմէնի գօ-
միթէնին 3 ազալարը Սթանպուլ

կէմիշէր , պունլար էրմէնիլէրն
աճալընը իսլահ իթմէք իշիւն

լազըմ կէլէն թէտպիր հագգընտա
թիւրք հիւքիւմէթի իլէ միւլէքէ-

րէ իտէճէլէր . վէ պունա մուգա-
պիլ գօմիթէլէրի թէսքին իթտիւրէ-

ճէլէր իմիշ (ինանմային)
—Յրանգօթրքէր Յայրառնկըն

Պաղտատտան ալտըրը մալիւմա-
թա պինտէն , Աճէմ քէօրթէլին-

տէ Բուսիանըն միւտէլէսինի
մէնն իթմէք իշիւն ինկիլթէրա

մախսուս պիր տօնանմա սիւհալան-

րըլմասընը իտտաա իթմէքտէ վէ
նիւմայիշէր իճրա էլլէմէքտէ տիր-

լէր . իշէ տէվամ իթմէքտէ օլան
իշիւլէրի հիւքիւմէթ զօրհալ մու-

հաֆապ իտէ պիլիօր :
—Բրէնս Եօրկի Կիրիտին ելնի

թանղիմ օլընճն գանուննամէսինի
թաատիգ իթտի վէ պու մինասի-

պէթլէ 99—98 սէնէսինտէ մաճ-
քիւմ օլան միւճրիմէլէրէ աֆիլը ու

մուսի իլան էլլէտի : Բրէնս քէն-
տիսինէ պէշ միւշալէր (խորհրդա-

կան) ինթիխապ իթտի , պունլար-
տան պիրի իսլամ բմըլ :

Կիրիտին մէճլիսի ումուիսի 9
միլիոն ֆրանկ 3 0/0 ֆայիլէ իս-

թիգրապ իթմէք իշիւն գարաթ
վէրտի :

Պու մէպաղտան 4 միլիոնը 4
տէվէթլէրէ օլան պօրճա պէտէլ

վէրիլէճէք , 5 միլիոնը իսէ 96—97
սէնէսինտէ զարարտիտէ օլան էհա-

լիյէ թէվիլթիւլընճագ տըր :
Էվրօրալըլարտան միւթէլէքի

մուլթէլէթ մահքէմէտէն մահքիւմ
օլանլար աֆիլը ումուիտէն իսթի-

ֆատէ էթմէլէճէլէր :
—Յիլիւրիլիլէր Ամէրիգալըլար

իլէ իթթիֆագ հապըլ իտէպիլմէք
իշիւն , մէճլիս թէճէրմիւ իտուպ-

տէ միւլէքէլէր իթմէք մագսէտի
իլէ 3 հաֆթա միւլթարէք թէք-

լիֆ էլլէտիլէր . ֆագաթ ժէնէրալ
Օթիս միւլթարէքիլի գապուլ իթ-

մէյուպ , հէր հարտէ թէպիւմ օլու-
լարընը իտտաա իտէյօր , վէ պու-

նա մուգապիլ աֆիլը ումուի իլան
իտէճէք իմիշ : Յիլիւրիլիլէր իսէ

Մ. Ամէրիգանըն հիւսայիսի ալ-
թընտա (բրօթէքթօրա) սէրպէս-

տիյէթ իլան իթմէք իսթէյօրլար :

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ
ՍՈՍԻԱԼ ԲԱՐԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐ ՌԵՅԵՆԷՆ ԵՐԱՇԱՌՈՐԵԱԼ
Ա. ՊԱՐԳԵՆԷՆ Է 500,000 ՅԲ. ՈՍԻԻ
50,000 տոմսեր հրապարակ հանուած
են , որոնց 25,000ը պիտի շահին հե-

տեւեալ կերպով . ներկայ տարւոյ՝
Յունիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր.

Յուլիս 7 1,500 » 135,180
Օգոստ. 4-5 2,000 » 241,780
Սեպտ. 3-4 » » 309,080

» 23-24 » » 363,240
Հոկտ. 13-33նոյ. 16,000 » 3,379,040

Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20
Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20

Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20
Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20

Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20
Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20

Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20
Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20

Ամբողջ 10 ֆ. 16 » 8 » 115,20